ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ «ՎԻՎԱՌՈ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ՏՐՎԱԾ ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԹԻՎ ԻՇԽ-004 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	N 277-Ա
Տիպ	Հրաման
Ակտի տիպ	Հիմնական ակտ (01.10.2020-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Միասնական կայք 2020.09.21-2020.10.04 Պաշտոնական հրապարակման օրը 02.10.2020
Ընդունող մարմին	Ֆինանսների նախարար
Ընդունման ամսաթիվ	30.09.2020
Ստորագրող մարմին	Ֆինանսների նախարար
Ստորագրման ամսաթիվ	30.09.2020
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	01.10.2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

30 սեպտեմբերի 2020 թ. N 277-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

«ՎԻՎԱՌՈ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ՏՐՎԱԾ ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԹԻՎ ԻՇԽ-004 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, հիմք ընդունելով «ՎԻՎԱՌՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ԻՇԽ-004 լիցենզիա) և «Սոֆթ Կոնստրակտ» ՍՊԸ կողմից 2020 թվականի սեպտեմբերի 22-ին ներկայացված համատեղ դիմումը (այսուհետ՝ Դիմում)՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 2011 թվականի սեպտեմբերի 28-ին «ՎԻՎԱՌՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ տրված ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին, 2020 թվականի սեպտեմբերի 30-ին կայացած վիճակախաղերի, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների լիցենզավորող հանձնաժողովի նիստի եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 275-Ա հրամանը՝ «Սոֆթ Կոնստրակտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման լիցենզիա տրամադրելու մասին.

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 2011 թվականի սեպտեմբերի 28-ին «ՎԻՎԱՌՈ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրված ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման թիվ ԻՇԽ-004 լիցենզիան ուժը կորցրած ճանաչել համաձայն Դիմումի։
2. Սույն հրամանը կարող է բողոքարկել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում։
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից։

Ա. Ջանջուղազյան

Պաշտոնական հրապարակման օրը՝ 2 հոկտեմբերի 2020 թվական:

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան